ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Վրաստանի Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով Վրաստանի Կառավարության ներկայացուցչի եւ Փարիզյան ակումբի մասնակից վարկատու պետությունների կառավարությունների ներկայացուցիչների միջեւ 2004 թվականի հուլիսի 21-ին Փարիզում ստորագրված Վրաստանի պարտքի կոնսոլիդացման մասին Համաձայնեցված արձանագրության (այսուհետ՝ Համաձայնեցված արձանագրություն) պայմանները,

երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման եւ ամրապնդման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Սույն Համաձայնագրի գործողության ոլորտը

Սույն Համաձայնագրի դրույթները կկիրառվեն 2002 թվականի փետրվարի 12-ի՝ "Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Վրաստանի Կառավարության միջեւ Հայաստանի Հանրապետության հանդեպ Վրաստանի պարտքի վերաձեւակերպման մասին" Համաձայնագրով (այսուհետ՝ 2002 թվականի փետրվարի 12-ի Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության հանդեպ Վրաստանի պարտքի չկոնսոլիդացված գումարի նկատմամբ:

Սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվի 2002 թվականի փետրվարի 12-ի Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության հանդեպ Վրաստանի պարտքի կոնսոլիդացված գումարի (այսուհետ՝ Կոնսոլիդացված գումար) նկատմամբ: Կոնսոլիդացված գումարը կսպասարկվի 2002 թվականի փետրվարի 12-ի Համաձայնագրի պայմանների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 2
Կոնսոլիդացիա

1. Սույն Համաձայնագրի համաձայն՝ կկոնսոլիդացվեն 2002 թվականի փետրվարի 12-ի Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության հանդեպ Վրաստանի պարտքի չկոնսոլիդացված գումարի (այսուհետ՝ Չկոնսոլիդացված գումար) հետեւյալ բաղադրիչները.

ա) ներառյալ 2004 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարման ենթակա եւ Համաձայնեցված արձանագրության ստորագրման պահի դրությամբ չվճարված Չկոնսոլիդացված գումարի հիմնական գումարի մարման եւ տոկոսավճարների (այդ թվում՝ տուգանքների) գծով պարտքի հարյուր տոկոսը,

բ) սկսած 2004 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2006 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ մարման ենթակա եւ Համաձայնեցված արձանագրության ստորագրման պահի դրությամբ չվճարված Չկոնսոլիդացված գումարի հիմնական գումարի մարման եւ տոկոսավճարների գծով պարտքի հարյուր տոկոսը:

2. Չկոնսոլիդացված գումարի գծով պարտքը, որը կոնսոլիդացվել է սույն հոդվածի 1-ին կետի համաձայն (այսուհետ՝ Վերաձեւակերպվող գումարներ), նշված է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող հմ. 1 հավելվածում:

ՀՈԴՎԱԾ 3
Վերաձեւակերպվող գումարների մարումը

1. Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետում նշված Վերաձեւակերպվող գումարի հիսուն տոկոսը կմարվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող հմ. 2 հավելվածով նախատեսված ժամանակացույցի համաձայն՝ ԱՄՆ դոլարով:

2. Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետում նշված Վերաձեւակերպվող գումարի մնացած հիսուն տոկոսը, ինչպես նաեւ "բ" ենթակետում նշված Վերաձեւակերպվող գումարը կմարվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող հմ. 3 հավելվածով նախատեսված ժամանակացույցի համաձայն՝ ԱՄՆ դոլարով:

ՀՈԴՎԱԾ 4
Տոկոսավճարների հաշվարկումն ու վճարումը

1. Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետում նշված Վերաձեւակերպվող գումարի վրա 2004 թվականի հուլիսի 1-ից սկսած կհաշվարկվեն տոկոսներ տարեկան 3% դրույքաչափով:

2. Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետում նշված Վերաձեւակերպվող գումարի վրա 2002 թվականի փետրվարի 12-ի Համաձայնագրով սահմանված համապատասխան վճարման ամսաթվից սկսած կհաշվարկվեն տոկոսներ տարեկան 3% դրույքաչափով:

3. Տոկոսավճարները կհաշվեգրվեն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ տարին 360 օր հաշվարկով լրացած օրերի փաստացի քանակի հիման վրա, եւ կվճարվեն ԱՄՆ դոլարով՝ հետեւյալ ժամկետներում.

ա) տոկոսավճարները, որոնք հաշվարկվում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն մարվող Վերաձեւակերպվող գումարի վրա, կվճարվեն համապատասխան Վերաձեւակերպվող գումարի մարման գծով վճարումների հետ միաժամանակ,

բ) տոկոսավճարները, որոնք հաշվարկվում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն մարվող Վերաձեւակերպվող գումարի վրա, կվճարվեն յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ին եւ մարտի 1-ին. ընդ որում՝ տոկոսավճարների մարման գծով առաջին վճարումը կիրականացվի 2004 թվականի սեպտեմբերի 1-ին, իսկ վերջին վճարումը կիրականացվի համապատասխան Վերաձեւակերպվող գումարի մարման գծով վերջին վճարման հետ միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 5
Ժամկետանց պարտավորությունների գծով տուգանքները

Վերաձեւակերպվող գումարների մարման կամ վերջիններիս վրա հաշվարկված տոկոսավճարների գծով ցանկացած վճարում սույն Համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն ժամանակին չկատարելու դեպքում կհամարվի ժամկետանց, եւ այդ պարտավորության վրա, մինչեւ դրա ամբողջական մարումը, կհաշվարկվի տուգանք տարեկան 4.5% դրույքաչափով՝ ելնելով տարին 360 օր հաշվարկով ժամկետանց օրերի փաստացի քանակից:

ՀՈԴՎԱԾ 6
Ապրանքներ եւ ծառայություններ

Կողմերի համաձայնությամբ Վերաձեւակերպվող գումարի մարման կամ դրա վրա հաշվարկված տոկոսավճարների գծով վճարումները կարող են իրականացվել ապրանքների մատակարարմամբ եւ ծառայությունների մատուցմամբ:

ՀՈԴՎԱԾ 7
Գործակալներ եւ ընթացակարգեր

Կողմերի լիազորված Բանկերը պարտավոր են մեկամսյա ժամկետում համաձայնեցնել սույն Համաձայնագրի պայմաններից բխող հաշվարկների իրականացման եւ հաշիվների վարման տեխնիկական կարգը:

Վճարման իրականացման ամսաթիվ է համարվում Հայաստանի Հանրապետության Լիազորված բանկի հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ 8
Հատուկ պայմաններ

1. Սույն Համաձայնագրի հմ. 2 եւ հմ. 3 հավելվածներով նախատեսված վճարումները, որոնց իրականացման ամսաթվերը նախորդել են սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին, եւ որոնք չեն վճարվել, վրացական Կողմը կմարի սույն Համաձայնագրի ստորագրման պահից 3 ամսվա ընթացքում:

2. Այն դեպքում, եթե վերը նշված վճարումները չիրականացվեն ժամանակին՝ համաձայն սույն հոդվածի 1-ին կետի, ապա դրանք կհամարվեն ժամկետանց, եւ դրանց վրա կհաշվարկվի տուգանք սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 9
Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին ծանուցման օրվանից եւ կգործի մինչեւ Կողմերի կողմից սույն Համաձայնագրից բխող պարտավորությունների լիակատար իրականացումը:

Կատարված է Երեւան քաղաքում 2005 թվականի սեպտեմբերի 29-ին, երկու բնօրինակով, ռուսերեն, որոնք իրավաբանորեն հավասարազոր են:

Հավելված 1

Կոնսոլիդացման ժամանակացույց
2-րդ հոդվածի 1.ա կետ, 3-րդ հոդվածի 1-ին կետ

ԱՄՆ դոլար

Կոնսոլիդացման ամսաթիվ	Կոնսոլիդացման ենթակա գումար	Հաշվեկշիռ
6/30/2004	1,959,300.00	1,959,300.00
Ընդամենը	1,959,300.00	-

Կոնսոլիդացման ժամանակացույց
2-րդ հոդվածի 1.բ կետ, 3-րդ հոդվածի 2-րդ կետ

ԱՄՆ դոլար

Կոնսոլիդացման ամսաթիվ	Կոնսոլիդացման ենթակա գումար	Հաշվեկշիռ
6/30/2004	1,959,300.00	1,959,300.00
6/30/2004	1,959,300.00	3,918,600.00
12/31/2004	2,079,470.40	5,998,070.40
6/30/2005	2,038,107.40	8,036,177.80
12/31/2005	1,999,356.80	10,035,534.60
Ընդամենը	10,035,534.60	-

Հավելված հմ. 2

Վերաձեւակերպվող գումարի մարման ժամանակացույց
4-րդ հոդվածի 3.ա կետ

ԱՄՆ դոլար

Վճարման ամսաթիվ	Մասնաբաժին գումարի գծով	Հիմնական գծով պարտք	Տոկոսավճարների գծով պարտք	Ընդամենը վճարում
12/1/2004	11.0%	431,046.00	25,144.35	456,190.35
6/1/2005	10.5%	411,453.00	23,178.52	434,631.52
12/1/2005	10.5%	411,453.00	17,031.22	428,484.22
6/1/2006	9.0%	352,674.00	10,697.78	363,371.78
12/1/2006	9.0%	352,674.00	5,378.28	358,052.28
Ընդամենը	50.0%	1,959,300.00	81,430.15	2,040,730.15

Հավելված հմ. 3

Վերաձեւակերպվող գումարի մարման ժամանակացույց
4-րդ հոդվածի 3.բ կետ

ԱՄՆ դոլար

Վճարման ամսաթիվ	Մասնաբաժին գումարի գծով	Հիմնական գծով պարտք	Տոկոսավճարների գծով պարտք	Ընդամենը վճարում
9/1/2004		20,572.65	20,572.65	
3/1/2005		69,502.90	69,502.90	
9/1/2005		102,670.47	102,670.47	
3/1/2006		131,209.13	131,209.13	
9/1/2006		153,878.20	153,878.20	
3/1/2007		151,369.31	151,369.31	
9/1/2007		153,878.20	153,878.20	
3/1/2008		152,205.61	152,205.61	
9/1/2008		153,878.20	153,878.20	
3/1/2009		151,369.31	151,369.31	
9/1/2009		153,878.20	153,878.20	
3/1/2010		151,369.31	151,369.31	
9/1/2010		153,878.20	153,878.20	
3/1/2011	2.00%	200,710.69	151,369.31	352,080.00
9/1/2011	2.07%	207,735.57	150,800.63	358,536.20
3/1/2012	2.10%	210,746.23	146,010.84	356,757.07
9/1/2012	2.21%	221,785.31	144,383.91	366,169.22
3/1/2013	2.28%	228,810.19	138,684.57	367,494.76
9/1/2013	2.33%	233,827.96	137,474.78	371,302.74
3/1/2014	2.43%	243,863.49	131,706.44	375,569.93
9/1/2014	2.51%	251,891.92	130,150.18	382,042.10
3/1/2015	2.60%	260,923.90	124,228.80	385,152.70
9/1/2015	2.68%	268,952.33	122,287.00	391,239.33
3/1/2016	2.77%	277,984.31	116,878.69	394,863.00
9/1/2016	2.85%	286,012.74	113,900.64	399,913.38
3/1/2017	2.95%	296,048.27	107,729.54	403,777.81
9/1/2017	3.05%	306,083.81	104,975.71	411,059.52

3/1/2018	3.16%	317,122.89	98,647.38	415,770.27
9/1/2018	3.26%	327,158.43	95,419.87	422,578.30
3/1/2019	3.37%	338,197.52	88,929.47	427,126.99
9/1/2019	3.48%	349,236.60	85,217.75	434,454.35
3/1/2020	3.59%	360,275.69	78,994.71	439,270.40
9/1/2020	3.71%	372,318.33	74,338.56	446,656.89
3/1/2021	3.84%	385,364.53	67,510.71	452,875.24
9/1/2021	3.96%	397,407.17	62,720.75	460,127.92
3/1/2022	4.09%	410,453.37	55,703.91	466,157.28
9/1/2022	4.23%	424,503.11	50,333.56	474,836.67
3/1/2023	4.37%	438,552.86	43,109.98	481,662.84
9/1/2023	4.51%	452,602.61	37,100.03	489,702.64
3/1/2024	4.66%	467,655.91	29,832.30	497,488.21
9/1/2024	4.82%	483,712.77	22,989.40	506,702.17
3/1/2025	4.985	499,769.62	15,318.57	515,088.19
9/1/2025	5.14%	515,826.47	7,909.34	523,735.81
Ընդամենը	100.00%	10,035,534.60	4,434,317.02	14,469,851.62

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. փետրվարի 8-ից: